

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Ուսանողի վարքագծի կանոններ

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ.....	4
2. ԵՄՀ սովորողի պարտականությունները	4
3. ԵՄՀ ուսանողի վարքագիծը լսարանում	5
4. Համալսարանի շենքում արգելվում է`	5
5. Վարքագծի կանոնները խախտելու դեպքում տույժերի կիրառումը.....	5

Փաստ. անվանումը	Ուսանողի վարքագծի կանոններ
Փաստաթղթի համարը	
Հաստատման ամսաթիվը	
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Ռեկտոր
Անուն/Ազգանուն/ Պաշտոն	Սուրեն Օհանյան
Ստորագրություն	

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Ուսանող է համարվում այն անձը, ով ռեկտորի հրամանով ընդունվել է Համալսարան որպես սովորող առկա կամ հեռակա բաժնում:
- 1.2. Ուսանողի վարքագծի կանոնները բարոյականության համընդհանուր սկզբունքների վրա հիմնված և ուսումնական հաստատությունների առանձնահատկությունների հաշվառմամբ վարվելակերպի և փոխահարաբերությունների առանձնահատկությունները սահմանող նորմեր են:

2. ԵՄՀ սովորողի պարտականությունները

- 2.1 Կատարել կրթական ծրագրերի պահանջները՝ հաճախել պարտադիր ուսումնական պարապմունքներին, կատարել ուսումնական պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները:
- 2.2 Կատարել ՀՀ օրենսդրության, ԵՄՀ կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների բոլոր պահանջները:
- 2.3 Ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում հանձնել բոլոր ստուգարքներն ու քննությունները:
- 2.4 Հոգատարությամբ վերաբերվել ԵՄՀ-ի գույքին, պատճառած վնասի համար կրել նյութական պատասխանատվություն:
- 2.5 Բարձր պահել ԵՄՀ-ի պատիվն ու հեղինակությունը:
- 2.6 Լինել կարգապահ, ԵՄՀ-ի ուսումնական և այլ կառույցներում պահպանել մաքրություն:
- 2.7 Հարգելի պատճառով պարապմունքներին չներկայանալու դեպքում սովորողը պարտավոր է հաջորդ իսկ օրը տեղյակ պահել ֆակուլտետի ղեկավարությանը, իսկ ներկայանալու առաջին իսկ օրը տվյալներ ներկայացնել պարապմունքներին չմասնակցելու պատճառների մասին:
- 2.8 Լինել հարգալից և բարեկիրթ ուսանող-ընկերների, դասախոսների և Համալսարանի ղեկավարության նկատմամբ:
- 2.9 Պատշաճ հագուստով և արտաքինով ներկայանալ համալսարան:
- 2.10 Պահպանել բարոյական այլ նորմերի պահանջները:

3. ԵՄՀ ուսանողի վարքագիծը լսարանում

- 3.1. Ուսումնական պարապմունքների սկիզբ է համարվում ժամը 9³⁰: 10 րոպեից ավել ուշանալու դեպքում դասախոսը իրավունք ունի չթույլատրել ուսանողին մասնակցելու դասին:
- 3.2. Ուսումնական պարապմունքների բնականոն ընթացքը չխաթարելու համար պարապմունքների սկսվելուց հետո պետք է շենքում ապահովվի լռություն և կարգապահություն: Չի թույլատրվում ընդհատել պարապմունքները, դրանց անցկացման ժամանակ մտնել լսարան և դուրս գալ լսարանից
- 3.3. Լսարաններում դասընթացի ժամանակ արգելվում է բջջային հեռախոսների կամ ժամանակակից կապի այլ միջոցների օգտագործումը, բացառությամբ՝ ուսումնական նպատակներով նման միջոցների օգտագործման անհրաժեշտության:

4. Համալսարանի շենքում արգելվում է՝

- գույքը վնասել
- ծիւել
- ալկոհոլային խմիչքներ օգտագործել
- ալկոհոլային կամ այլ հարբածության վիճակով ներկայանալ, կամ դասերին մասնակցել
- թղթախաղով զբաղվել
- առանց վարչակազմի թույլտվության տեղաշարժել գույքը
- պատերի վրա դաջվածքներ կատարել
- սպորտային հագուստով ներկայնալ

5. Վարքագծի կանոնները խախտելու դեպքում տույժերի կիրառումը

- 5.1. Սովորողների կողմից ՀՀ օրենսդրությամբ, ԵՄՀ կանոնադրությամբ նախատեսված պարտականությունների, ներքին կարգապահության կանոնների և սույն վարքագծի կանոնների խախտման դեպքում նրա նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը.

- նկատողություն
- խիստ նկատողություն
- հեռացում համալսարանից

5.2. Համալսարանի ներսում կամ չթույլատրված տարածքում ծխելու դեպքում ուսանողը տուգանվում է 5000 դրամի չափով:

5.3. Կիրառված կարգապահական տույժերի մասին տեղեկացվում է ուսանողներին:

5.4. Մինչև կարգապահական տույժի կիրառումը ուսանողից պահանջվում է գրավոր բացատրություն:

5.5. Կարգապահական տույժը կարող է կիրառվել արարքի բացահայտումից ոչ ուշ, քան մեկ ամսվա և կատարումից ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում չհաշված ուսանողի հիվանդության կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածը: Եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո մեկ ուսումնական տարվա ընթացքում ուսանողը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի, ապա դա համարվում է մարված: